Այս դասի (մոտիվացնող ներածական տեսանյութ+ դասի տեքստ+ բառարան+ինքնաստուգիչ հարցեր) յուրացման համար հարկավոր է մինչև ***4 ժամ***:

ԴԱՍ 5

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՏԺԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ՔՐԵԱՀԻՐԱՎԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ: ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԾՐԱԳՐԵՐԸ

Ցուցումներ

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռաուսուցման բաժնում և հեռաուսուցման փաթեթի կրիչում)

Մինչև 5 րոպե

ՀՀ դատարանների կողմից արդարադատության իրականացման գործընթացում առավել վիճահարույց հարցը ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակների, քրեաիրավական ներգործության այլ տեսակների, խափանման միջոցների կիրառումն է, հատկապես երբ խոսքը վերաբերում է երեխային:

Ուշադրությամբ կարդացե՛ք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցե՛ք հաջորդ մասերին /ինքնաստուգիչ հարցեր, առաջադրանք/:

Մինչև 180 րոպե

Երեխային ազատությունից զրկելու հիմքերն ու պայմանները նախատեսված են Մարդու իրավունքների և

հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայի [4] հոդված 5-ում, որի մեկնաբանությունից բխում է, որ անչափահասին ազատությունից կարելի է զրկել ազատազրկման հետ կապված պատժատեսակների (ազատազրկում, կալանք) կամ քրեա-իրավական ներգործության միջոցների դատապարտելիս, դաստիարակչական հսկողության, վարակիչ հիվանդու-թյունների տարածումը կանխելու նպատակներով, մինչ դատավճռի կայացումը՝ ձերբակալում կամ կալանավորում իրականացնելիս, երեխայի անօրինական մուտքը երկիր կանխելու, երեխային այլ պետության հանձնելու կամ արտաքսելու նպատակով ձերբակալելիս կամ կալանավորելիս: Նաև ազատությունից կարելի է զրկել հոգեկան հիվանդներին, ալկոհոլիկներին, թմրամոլներին, թափառաշրջիկներին: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 37-ի (բ) կետը սահմանում է, որ «Երեխայի ձերբակալությունը, կալանքը կամ ազատազրկումն իրականացվում են համաձայն օրենքի և գործադրվում են միայն որպես ծայրահեղ միջոց և, որքան հնարավոր է, կարճ ժամանակամիջոցով»: Այս առումով առավել մանրամասն կանոնակարգումներ պարունակում է Պեկինյան կանոնների [7] կետ 17.1-ը, որը սահմանում է, որ «…բ) անչափահասի անձնական ազատության սահմա-նափակման մասին որոշումը պետք է ընդունվի միայն հարցի մանրազնին քննարկումից հետո, և սահմանափակումը պետք է հասցնել հնարավոր նվազագույնի, գ) անչափահաս իրա-վախախտին պետք չէ զրկել ազատությունից, եթե միայն նա մեղավոր չի ճանաչվում այլ անձի դեմ բռնությամբ լուրջ արարք գործելու կամ լուրջ իրավախախտումներ բազմիցս կատարելու համար, և եթե առկա չէ արձագանքման այլ համապատասխան միջոցը…»: Նույն կանոնների կետ 13.1-ը նախատեսում է, որ «մինչդատական կալանքը պետք է կիրառվի միայն որպես ծայրահեղ միջոց և ամենակարճ ժամկետով»: Բանգկոկյան կանոնների 65-րդ կանոնը հատուկ դրույթ է պարունակում

իգական սեռի անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելիս՝ ազատությունից զրկելու հետ կապված ներգործության միջոցների կիրառման առումով, սահմանելով, որ «…առավելագույնս պետք է խուսափել օրենքի հետ կոնֆլիկտի մեջ գտնվող երեխաներին քրեակատարողական հիմնարկներ տեղավորելուց: Որոշում կայացնելիս հաշվի է առնվում իգական սեռի անչափահաս իրավախախտների՝ գենդերային գործոններով պայմանավորված խոցելիությունը…»: ԵԽ նախարարների կոմիտեի՝ կալանքի տակ պահելու, կալանքի տակ պահելու պայմանների և չարաշահումից պաշտպանված լինելու երաշխիքների տրամադրման վերաբերյալ 2006 (13) հանձնարարականի [11] կետ 3-ը սահմանում է, որ կալանքի կիրառումը, հատկապես նախնական քննության փուլում, պետք է լինի բացառություն, այլ ոչ թե նորմ:

Ներկայացված դրույթներից հետևում է, որ անչափահասին ազատությունից զրկել հնարավոր է միայն որպես ծայրահեղ միջոց, այսինքն՝ երբ համաչափ արձագանքման այլ միջոցներ չկան: Ընդ որում՝ դա հնարավոր է հետևյալ դեպքերում՝

Բերեք օրինակ:

ա) մինչդատական փուլում՝ ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոց կիրառելիս,

բ) անչափահասին ազատությունից զրկելու հետ կապված պատժի կամ քրեաիրավական ներգործության այլ տեսակի դատապարտելիս՝ պայմանով, որ նա մեղավոր է ճանաչվել այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով լուրջ արարք գործելու մեջ,

գ) անչափահասին ազատությունից զրկելու հետ կապված

պատժի կամ քրեաիրավական ներգործության այլ տեսակի դատապարտելիս՝ պայմանով, որ նա մեղավոր է ճանաչվել լուրջ իրավախախումներ բազմիցս գործելու մեջ:

Թեև Պեկինյան կանոնները չեն հստակեցնում, թե ինչ պետք է հասկանալ «լուրջ արարք», «լուրջ իրավախախտում» հասկացությունների ներքո, սակայն դժվար է պատկերացնել, որ, օրինակ, ոչ մեծ ծանրության հանցագործությունները կարող են ընդգրկվել այդ հասկացությունների ներքո:

Փորձե՛ք ինքնուրույն որոշարկել հասկացությունները:

Գործող քրեական օրենսգիրքը առանձնահատուկ կարգավորում է անչափահասների նկատմամբ կիրառման ենթակա պատժի համակարգը, որը ներառում է տուգանք, հանրային աշխատանքներ, կալանք և ազատազրկում: Վերջին երկուսը հանդիսանում են անչափահասին ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակներ:

ՀՀ քրեական օրենսգրքի [1] հոդված 88-ի համաձայն՝ կալանք պատժատեսակը կարող է կիրառվել դատավճռի կայացման պահին 16 տարին լրացած անչափահասի նկատմամբ՝ 15 օրից 2 ամիս ժամկետով: Ընդ որում՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 57-ի մեկնաբանությունից հետևում է, որ կալանքը կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար: Անչափահասի նկատմամբ կալանք պատժատեսակի կիրառումը նման կանոնակարգումների պարագայում խնդրահարույց է, քանի որ հակադրվում է Պեկինյան կանոնների պահանջներին. ոչ մեծ ծանրության հանցագործությունը դժվար է դիտարկել որպես Պեկինյան կանոններում նշված «լուրջ իրավախախտում», որի բազմիցս կատարման համար կամ այն բռնությամբ զուգորդելու դեպքում նշանակվի ազատությունից զրկելու հետ կապված պատիժ:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 89-ի համաձայն՝ ազատազրկումն անչափահասների նկատմամբ նշանակվում է ոչ մեծ ծանրության հանցագործության համար առավելագույնը 1, միջին ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը 3, մինչև 16 տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը 7, 16-ից մինչև 18 տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը 10 տարի ժամկետով: Նույն օրենսգրքի հոդված 90-ի համաձայն՝ մինչև 16 տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել 7, 16-ից մինչև 18 տարեկանների համար՝ 10 տարին: Ըստ դատավճիռների համակցության՝ ազատազրկման ձևով նշանակվող վերջնական պատիժը չի կարող գերազանցել 12 տարին: Օրենսդիրը հնարավոր է համարում ազատազրկում պատժատեսակի կիրառումը ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անչափահասի նկատմամբ, ինչը, ինչպես և կալանքի դեպքում, հանդիսանում է Պեկինյան կանոններից շեղում:

Ինչ վերաբերում է քրեադատավարական օրենսդրության շրջանակներում կիրառվող ձերբակալմանը, կալանավորմանը, ինչպես նաև բժշկական կամ դաստիարակչական հաստատությունում անձին հարկադրաբար տեղավորելուն, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի [2] հոդված 11-ի համաձայն՝ այն թույլատրվում է միայն դատարանի որոշմամբ: Մինչև դատարանի համապատասխան որոշումն ստանալը անձը չի կարող ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահվել 72 ժամից ավելի: Յուրաքանչյուր ձերբակալվածի և կալանավորվածի անհապաղ հաղորդվում են ձերբակալության կամ կալանավորման հիմքերը, ինչպես նաև

այն հանցագործության փաստական հանգամանքները և իրավաբանական որակումը, որի կատարման մեջ նա կասկածվում կամ մեղադրվում է: Դատարանը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը պարտավոր են անհապաղ ազատ արձակել անազատության մեջ ապօրինի պահվող յուրաքանչյուր անձի:

Անչափահասին ձերբակալելիս և կալանավորելիս գործում են նույն հիմքերն ու պայմանները, ինչ որ չափահասի դեպքում: Օրենսդիրը սահմանում է, որ կալանավորումը կարող է կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ և նման որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին կալանքից գրավով ազատելու հնարավորության հարցը: Մինչդեռ Պեկինյան կանոնների կետ 13.2-ը սահմանում է, որ կալանավորումը հնարավորինս պետք է փոխարինվի այլընտրանքային միջոցներով, ինչպիսիք են՝ հետևողական հսկողությունը, դաստիարակչական ակտիվ աշխատանքը կամ դաստիարակչական հաստատությունում տեղավորելը, իր կամ այլ ընտանիքի խնամքին ու հսկողությանը հանձնելը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 442-ով անչափահասների հանդեպ կալանավորման միայն մեկ առանձնահատկություն է սահմանված, որ այն թույլատրելի է միայն այն դեպքում, երբ երեխային վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարում: Ինչ վերաբերում է կալանավորման տևողությանը, ապա այս առումով որևէ առանձնահատկություն սահմանված չէ. մինչդատական վարույթում դրա տևողությունը չպետք է գերազանցի 12 ամիսը, իսկ դատական քննության առումով սահմանափակում առկա չէ: Նման մոտեցումը չի բխում անչափահասների գործերով արդարադատության իրականացման միջազգային իրավական նորմերի պահանջներից, որոնք նշում են, որ տարբերակված մոտեցում

Փորձե՛ք առանձնացնել Հայաստանում այլընտրանքային միջոցների կիրառմանը նպաստող և խոչընդոտող գործոնները:

պետք է լինի չափահասների և անչափահասների նկատմամբ:

Պեկինյան կանոնների կետ 13.5-ի համաձայն՝ թե՛ նախնական, թե՛ դատական քննության, թե՛ դատավճռի կայացմանը հետևող ժամանակահատվածում յուրաքանչյուր երեխայի համար պետք է ապահովվի նրա խնամքը, պաշտպանությունը (այդ թվում՝ իրավաբանական), անհրաժեշտ անհատական սոցիալական, հոգեբանական, բժշկական, ֆիզիկական օգնությունը, ինչպես նաև կրթության, պրոֆեսիոնալ պատրաստության ասպարեզներում օգնությունը, որոնք կարող են պահանջվել՝ երեխայի տարիքը, սեռը և անձը նկատի առնելով: Մինչդեռ կալանքի կիրառման դեպքում ՀՀ-ում ներկայումս հնարավոր չէ ապահովել երեխաների կրթության իրավունքը:

Քրեակատարողական հիմնարկներում երեխաների պահվելուն ներկայացվող պահանջները սահմանվում են ինչպես ՀՀ օրենսդրությամբ, այնպես էլ մի շարք միջազգային ակտերով՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններով [6], Բանգկոկյան կանոններով [9], Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec (2006) 2 հանձնարարականով՝ Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ [8] և այլն: Այդ հարցերը առավելագույն մանրամասնությամբ ներկայացված են Հավանայի կանոններում [10]: ՀՀ քրեակատարողական օրենսգրքում արտացոլված է անչափահասներին չափահասներից անջատ պահելու պահանջը, սակայն դա գործնականում հնարավոր չէ իրականացնել, օրինակ, իգական սեռի անչափահաս դատապարտյալների պարագայում: Մինչդեռ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան [5] սահմանում է, որ «…ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա պետք է առանձնացվի մեծահասակներից, եթե միայն

չի համարվում, որ երեխայի լավագույն շահերից ելնելով՝ հարկավոր չէ այդ անել և պետք է իրավունք ունենա կապ պահպանել իր ընտանիքի հետ նամակագրության և տեսակցությունների միջոցով՝ բացառությամբ հատուկ հանգամանքների»: Այս կանոնի խախտում ՄԻԵԴ-ը արձանագրել է Գյուվեքը ընդդեմ Թուրքիայի (Güveç v. Turkey) [13] և Նարթը ընդդեմ Թուրքիայի (Nart v Turkey) [12] գործերով, երբ հանցագործության մեջ կասկածվող անչափահասները մինչդատական փուլում կալանքի ժամկետը ստիպված են եղել անցկացնել չափահասների հետ:

ՀՀ քրեական արդարադատության համակարգում երեխաների նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակները, ինչպես նաև կալանավորումը, ապահովվում են «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի շրջանակներում, որում նախատեսված է մեկուսացման երկու աստիճան՝ *բաց* և *կիսաբաց*: Այդտեղ է ապահովվում ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակների դատապարտված արական սեռի անչափահաս դատապարտյալների պատժի իրականացումը: Մեկուսացման առավել բարձր աստիճան է ապահովվում այն անչափահասների համար, որոնց նկատմամբ կիրառվել է կալանք:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում համայնքային կանխարգելիչ-վերականգնողական տարաբնույթ ծրագրերը, որոնք նպատակաուղղված են ազատազրկման հետ կապված պատժատեսակների դատապարտված երեխաների վերաինտեգրմանը հասարակությունում: Միջազգային պրակտիկայում դրանց թվին են դասվում **պրոբացիան** (պատիժը պայմանականորեն չկիրառելը), պատժից պայմանական-վաղաժամկետ ազատվելը, աշխատանքի կամ ուսման նպատակով քրեակատարողական հիմնարկից դուրս

գալը, արձակուրդը, այսպես կոչված **«halfway house»** ծրագրերը, որոնք ուղղված են ազատությունից զրկված անձի վերաինտեգրմանը հասարակությունում: Նշված ծրագրերի մի մասը, թեկուզ և այլ անվանումով և կանոնակարգմամբ, իրականացվում է նաև ՀՀ-ում: Օրինակ՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի [3] հոդված 80-ը սահմանում է կարճաժամկետ մեկնման հնարավորություն՝ սոցիալական վերականգնման նպատակով, հոդված 114-ը՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու պայմանները: ՀՀ-ում առավել տարածում ունեն անչափահասների հանցավորությունը կանխարգելելուն ուղղված ռիսկային կամ ոչ մեծ ծանրության իրավախախտում կատարած երեխաների հետ վերականգնողական աշխատանք իրականացնող համայնքային-վերականգնողական կենտրոնները (ՀՎԿ): Նախատեսվում է, որ ՀՀ պրոբացիոն ծառայությունը ևս ակտիվ ներդրում կունենա այս գործընթացում:

Այս դասի շրջանակներում քննարկեցինք

- անչափահասների նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված քրեաիրավական ներգործության միջոցների նշանակման և կիրառման պայմանները,
- քրեակատարողական հիմնարկին ներկայացվող պահանջները,

ընդհանուր պատկերացում տվեցինք

- հանցանք կատարած երեխայի վերասոցիալականացմանն ուղղված համայնքային կանխարգելիչ ծրագրերի մասին:

Անչափահասին ազատությունից զրկելու հետ չկապված պատժատեսակների ու խափանման միջոցների կիրառության հիմնախնդիրները կքննարկենք հաջորդ դասի շրջանակներում:

Նշումների համար `

.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....

Վերաինտեգրում – Միջոցառումների համալիր՝ ուղղված անձի խախտված կամ կորցրած հասարակական կապերի և հարաբերությունների վերականգնմանը, ինչը թույլ կտա անձին առանց կոնֆլիկտների ապրել սոցիալական միջավայրում և հարաբերվել այլ անձանց հետ, զերծ մնալ հանցավոր վարքագծի դրսևորումից:

Վերասոցիալականացում – Իրավական, կազմակերպական և սոցիալ-հոգեբանական միջոցառումների իրականացման գործընթաց՝ ուղղված իրավախախտում կատարած անձի արժեքային կողմնորոշումների, վարքագծի նորմերի, մոդելների՝ հասարակության կողմից ընդունելի տարբերակների վերափոխմանը:

Վերականգնողական ծրագիր – Պետական կամ հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրեր (օրինակ՝ կրթական, հոգեբանական աջակցության)՝ ուղղված իրավախախտում կատարած անձի վերասոցիալականացմանը, վերաինտեգրմանը, դրական ներանձնային փոփոխությունների խթանմանը, ինչն էլ նվազեցնում է հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

Այլընտրանքային միջոցներ – Ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակներ (օրինակ՝ տուգանք, հանրային աշխատանքներ) կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցներ (օրինակ՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ) կամ արձագանքման այլ միջոցներ (օրինակ՝ մեդիացիա կիրառելը, պատիժը պայ-

Ցուցումներ

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

Մինչև 25 րոպե

մանականորեն չկիրառելը և փորձաշրջան սահմանելը):

Երեխայի լավագույն շահ – Երեխայի իրավունքների երաշխավորման սկզբունք, որի առանցքում նրա բարեկեցության ապահովումն է՝ նպատակ հետապնդելով առավելագույնս երաշխավորել երեխայի անվտանգությունը, ինչպես նաև նրա առաջնահերթ կարիքների բավարարումն ու խնամքը: Երեխայի լավագույն շահը որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքով՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ երեխայի տարիքը, նրա հասունության մակարդակը, մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի հնարավորությունը, ծնողների ներկայությունը կամ բացակայությունը, նրանց հետ հուզական կապը, երեխայի զարգացման համար ծնողի/ների, ընտանիքի անդամների հետ անվտանգ պայմաններում շփվելու կարևորությունը, երեխայի սոցիալական շփումը (դպրոց, ընկերներ, մասնակցություն մշակութային կյանքին, սոցիալ-մշակութային խմբակներին և այլն), ինչպես նաև երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր, կրոնական կապերը:

Ռիսկային անչափահաս – Երեխա, ով գտնվում է այնպիսի գործոնների ազդեցության տակ, որոնք բարձրացնում են իրավախախտ (դելինկվենտ) կամ շեղվող վարքագիծ դրսևորելու նրա հակվածությունը:

Օրենքի հետ կոնֆլիկտի մեջ գտնվող երեխա – 18 տարին չլրացած անձ, ով առնչվում է արդարադատության համակարգի հետ՝ հանցանք կատարած լինելու կասկածի կամ մեղադրանքի առկայու-

թյան պարագայում:

Պրոբացիա – Սոցիալ-հոգեբանական ծառայությունների համակարգ՝ուղղված հանցանք կատարած անձի վերաինտեգրմանը, վերասոցիալականացմանը, նրա կողմից նոր հանցանքների կանխմանը, ինչպես նաև հանրային անվտանգության ապահովմանը: Այն իրականացվում է հանցանք կատարած անձի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցների կիրառման, պատիժը պայմանակա-նորեն չկիրառելու, պատժից պայմանական վա-ղաժամկետ ազատելու, պատժի կրումից ազա-տելու կամ պատժի կրումը հետաձգելու ըն-թացքում հսկողություն, ուղղորդում և աջակ-ցություն իրականացնելու միջոցով:

Պրոբացիոն ծառայություն – Պրոբացիա իրականացնող պետական իրավասու մարմին:

(Halfway house) – կացարանային տիպի կենտրոն՝ նպատա-կաուղղված դատապարտյալների վերաինտե-գրմանը հասարակությունում, այդ թվում՝ նրանց նոր մասնագիտական հմտություններ սովո-րեցնելով, հոգեբանական օգնություն կամ այլ օժանդակություն տրամադրելով: